Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

«ԽՈՐՏԱԿՎԱԾ ՀՈԳԻՆԵՐԻ» ՓՈՂՈՑՈՒՄ

Այդ տասնութ տարեկան աղջկան ես հանդիպեցի սրանից մեկկկես տարի առաջ:

Մի պայծառ ու արևոտ առավոտ էր, երբ վեր կացա անկողնից և շտապեցի գնալ գյուղ: Կիրակին արդեն անցել էր, նորից երկուշաբթի էր:

Բայց ես դեռ չասացի, թե ինչ մարդ էի ես և ինչու էի գնում գյուղ: Ես կոմերիտական էի և աշխատում էի գյուղերում որպես կոմերիտմիության հրահանգիչ: Յուրաքանչյուր շաբաթ երեկո ես գալիս էի քաղաք, տեսնվում էի ընկերներիս հետ, կիրակի օրն անց էի կացնում քաղաքում, իսկ երկուշաբթի առավոտյան նորից վերադառնում էի գյուղ:

Այս անգամ կիրակին ես այնքան լրիվ էի օգտագործել և հոգնել, որ այդ առավոտյան արթնացա բավական ուշ և շտապեցի իսկույն ճանապարհ ընկնել: Բայց երբ անցա գավկոմի լուսամուտների տակով և լսեցի ներսից եկող զվարթ ձայները, ներս մտա մի քանի րոպեով՝ մի անգամ ևս խոսելու և կատակելու ընկերներիս հետ:

Ահա հենց այդտեղ էլ տեսա նրան և եթե չեմ սխալվում, հենց այդտեղ էլ սիրահարվեցի: Ես բոլորովին այդպիսի մտադրություն չունեի, երբ գավկոմի ընդունարան մտնելիս, տեսնելով նրան, որ լուսամուտի մոտ կանգնած հերթի էր սպասում՝ քարտուղարի մոտ գնալու համար, մոտեցա և ասացի.

— Բարև ձեզ, ընկերուհի, եկեք ծանոթանանք:

Հավատացնում եմ ձեզ, որ ուրիշ մտքով չասացի այդ խոսքերը: Ես միշտ այդ կերպ եմ ծանոթանում տղաների, բնականաբար նաև աղջիկների հետ:

— Մենք ծանոթ ենք իրար,— ասաց նա և ծիծաղեց:

Միայն այդ ծիծաղի ժամանակ ես նկատեցի, որ նա գեղեցիկ էր:

— Ծանո՞թ ենք,— ասացի ես զարմանքով,— երբվանի՞ց...

— Չե՞ս հիշում,— ասաց նա՝ կարծես վիրավորվելով, որ չեմ հիշում իրեն,— մենք սովորել ենք միասին՝ մի դասարանում, սրանից երկու տարի առաջ: Ճիշտ է, կարճ ժամանակով, որովհետև ես շուտով փոխադրվեցի ուրիշ դպրոց:

Ասաց ու ձեռքով շտկեց ճակատի վրա թափված մազերը: Նրա ձեռքն էլ էր գեղեցիկ:

— Ափսոս, չեմ հիշում,— ասացի ես և տխրեցի: Բայց չգիտեմ, թե ինչու տխրեցի: Հետագայում դրա համար շատ էի ծիծաղում ինքս ինձ վրա: Գուցե նրա համար տխրեցի, որ աղջիկը չէր հավատում ինձ, թե իրոք, բոլորովին մոռացել եմ նրան:

Նա նորից ծիծաղեց, և այս անգամ նրա ծիծաղը չափազանց չարաճճի էր ու զվարթ:

— Ոչինչ, եթե չես հիշում. անունս Անահիտ է, իսկ ազգանունս՝ Տեր-Կարապետյան, բայց որովհետև հիմի Տեր չկա, դրա համար էլ՝ Կարապետյան:

— Հա՞,— ասացի ես նույնպես ծիծաղելով ու, չգիտեմ ինչու, զարմանալով:— Իսկ իմ անունը...

— Գիտեմ,— ասաց նա՝ ընդհատելով,— Արամ է: Արամ Հարությունյան:

— Որտեղի՞ց գիտես...

— Ձագսից եմ իմացել,— ասաց նա՝ չգիտեմ քանիերորդ անգամ ծիծաղելով:

Ես, իհարկե, չհավատացի: Իսկապես, որտեղի՞ց է իմացել...

— Ի՞նչ մարդ ես,— նախատեց նա,— այդ էլ չես հասկանում:— Եթե մենք մի դասարանում ենք սովորել, ուրեմն և...

— Հա՜...— բացականչեցի ես,— իսկապես որ...

Ուրեմն նա չի մոռացել դեռ այն ժամանակից: Լավ հիշողություն ունի:

Նա պատմեց, թե ինչպես ես ու ինքը, ինչպես նաև մի ուրիշ ընկերուհի, մի քանի անգամ միասին ենք պատրաստել:

Այդ էլ չէի հիշում:

— Ծնողներ ունե՞ս, Անահիտ:

— Ծնողներս մեռել են, իսկ ես մենակ եմ և աշխատում եմ ծխախոտի գործարանում: Եթե ինձ հետ միևնույն սենյակում ապրող ընկերուհուս չհաշվենք, ես բացարձակապես մենակ եմ:

«Բացարձակապեսն» ինձ դուր չեկավ: Ինչո՞ւ բացարձակապես: Բայց նույն րոպեին նա նորից գեղեցիկ ծիծաղեց, և ես մոռացա այդ:

Քարտուղարի մոտ գնալու հերթը հասավ նրան: Մի անգամ ևս ծիծաղեց ու մտավ կաբինետ: Նոր միայն հիշեցի, որ ուշացել եմ: Դուրս եկա փողոց և շտապ-շտապ քայլեցի դեպի գյուղ տանող ճանապարհը: Որպեսզի շուտ հասնեմ տեղ, սկսեցի սուլել մի աշխույժ քայլերգ: Դրա տակտի համաձայն փոխում էի քայլերս՝ արագ-արագ և լայն-լայն...

Մինչև գյուղ հասնելս նրա մասին էի մտածում: Լավ աղջիկ է, ուրախ, գեղեցիկ, և կարծես ինչ-որ բանով զանազանվում է մյուս աղջիկներից: Ամբողջ ճանապարհին ես այդ «ինչ-որ բանի» մասին էի մտածում, բայց չէի կարողանում ըմբռնել, թե ինչն էր դա: Միայն այնքան էի կարողանում հասկանալ, որ նա էլ մի պարզ և ընկերական աղջիկ է՝ մյուսների նման, բայց ավելի է գիտակցում իր աղջիկ լինելը, քան մյուսները: Երբ խոսում էի նրա հետ, ինձ ևս պաշարել էր այն զգացումը, որ ես խոսում եմ ոչ թե ընկերուհու, այլ աղջկա հետ:

Ուրիշ անգամ գյուղ գնալիս, մենակությունից չձանձրանալու համար, ես հասնում էի առջևից գնացող գյուղացիներին և խոսելով նրանց հետ զանազան բաների մասին, կարճում էի ճանապարհս: Իսկ եթե ոչ ոք չէր հանդիպում, ես զբաղվում էի ուրիշ բանով: Նայում էի իմ շուրջը փռված դաշտերին և մտածում էի: Այ, այս արտից սկսած մինչև դիմացի սապատավոր սարը՝ հսկայական տարածություն է: Ո՞վ գիտե, գուցե մի քանի տասնյակ տարի հետո այստեղ փռվի մի մեծ քաղաք և քաղաքի անունն էլ լինի Կոմունաշեն:

Ամեն անգամ, երբ անցնում էի ապագա Կոմունաշենի մոտով, ես շարունակ համակվում էի նրա գեղեցիկ հեռապատկերով:

Քանի որ տարվա այդ եղանակին գյուղի ճանապարհի վրա անցորդներ սակավ էին լինում, դրա համար էլ ես ստիպված էի ավելի և ավելի զբաղվել Կոմունաշենի հեռապատկերով: Բանն այնտեղ հասավ, որ ես սկսեցի քաղաքը հատակագծել և փողոցներ ու շենքեր կառուցել այնտեղ: Կառուցում էի, քանդում, նորից կառուցում ու քանդում, մինչև որ քաղաքն ստացավ իր վերջնական տեսքը՝ կոմունիստական հասարակության յուրաքանչյուր անդամին պատշաճ հարմարություններով: Մինչև հիմա էլ ես հավատացած եմ, որ եթե մի օր ինձ նշանակեն Կոմունաշենի կառուցման գլխավոր ճարտարապետ՝ չեն սխալվի:

Այդ օրն ևս, գյուղ տանող ճանապարհի վրա ինձանից բացի ոչ ոք չէր երևում, ուստի և ես սկսեցի Կոմունաշենի փողոցներով տրամվայի գիծ անցկացնել: Բայց Անահիտը եկել կանգնել էր իմ մտքի առաջ և չէր հեռանում: Էլ ի՞նչ կարող ես անել:

Այդ դեռ ոչինչ, որ Կոմունաշենի նման մի հսկայական քաղաք տրամվայ չունեցավ: Ցավն այն է, որ ըստ սովորականի նստելով գյուղի մոտ, ճանապարհի եզրին ընկած քարի վրա, ես այդ օրը չզբաղվեցի գործիս վերաբերող խնդիրներով: Սովորություն ունեի քաղաքում գտնված ժամանակս, կիրակի երեկոյան, կազմել գյուղերում տանելիք աշխատանքիս առաջիկա շաբաթվա ծրագիրը, որը թեև բարեխղճորեն մշակում էի, բայց մի անգամ ևս աչքի էի անցկացնում՝ այդ քարի վրա հանգստանալիս: Իսկ այսօր, ինքս էլ չիմացա, թե ինչպես, մտածեցի միայն Անահիտի մասին: Կարմիր քարն արդեն ետև էի թողել, երբ սթափվեցի և հիշեցի այդ: Այլևս ետ չվերադարձա, բայց խոսք տվեցի ինձ, որ աշխատանքիս օրերին չմտածեմ նրա մասին: Ես խոսքս, իհարկե, կատարեցի, բայց մի քանի փոքր վերապահումներով: Եվ մի քանի էլ մեծ:

3

Երբ այդ շաբաթը վերջացավ, նոր միայն զգացի, որ վեց օր ասածդ քիչ բան չէ: Զգացի նաև, որ գյուղից մինչև քաղաք ձգվող ճանապարհը բավական երկար է եղել, իսկ ես միայն նոր եմ նկատում այդ: Ինձ թվում էր, թե իմ փոխած յուրաքանչյուր քայլի փոխարեն քաղաքը հեռանում էր ինձանից երկու քայլ: Հասնելու հույսս կտրվում էր արդեն, երբ մոտեցա քաղաքի տների առաջին շարքին: Բայց այդ օրը քաղաքը զարմանալիորեն մեծացել էր, փողոցները երկարել էին և տեղ հասնել չէր լինում:

Բայց ահա, վերջապես, մայր մտնող արևի շողերի տակ երևացին փոքրիկ սենյակիս պատուհանի պսպղացող ապակիները: Մոտեցա դարպասին, թակեցի և, ինչպես միշտ, այդպես էլ այդ անգամ, դուրս ելավ հարևան պառավը և բացեց դռնակը: Պառավը սովորաբար հագած էր լինում աշխարհագրության քարտեզի բոլոր գույներով կարկատված մի զգեստ, որի փոխարեն այսօր հագել էր նոր շորեր:

Մեր սովորական սիրալիր ողջույններից հետո ես ասացի:

— Շնորհավոր լինի, տատի...

— Հա, որդի, թոռս է կարել տվել, ինքն էլ մի ամիս արձակուրդ է առել, էսօր-էգուց գալու է:

Նրա թոռը մի ուրիշ քաղաքում սովորում էր և այժմ ավարտելով, անցել էր աշխատանքի: Նա իր առաջին վաստակից բաժին էր հանել նաև տատիկին: Մասնակցելով պառավի ուրախությանը, ես մտա սենյակս: Արդեն ուշ էր և շտապում էի գնալ ակումբ՝ տեսնելու ընկերներիս: Բացի դրանից, այդ ժամերին հավաքույթներ էին տեղի ունենում: Պետք էր հասնել:

Ինչպես միշտ, այդ օրն էլ առաջին գործս եղավ հագուստս մաքրել փոշուց, լվացվել, սանրվել: Մասնավորապես մեծ խնամքով սանրեցի մազերս, հագուստիս տվեցի, որքան հնարավոր էր, վայելուչ տեսք: Խոսք անգամ չի կարող լինել, թե այդ օրվա հատուկ հոգատարությունս իմ արտաքինի նկատմամբ որևէ կապ ուներ Անահիտին հանդիպելու ցանկությանս հետ: Իհարկե ոչ: Քանի որ պառավը կարող է նոր շորեր հագնել, ինչո՞ւ երիտասարդը չի կարող գոնե իր ունեցածը հարդարել:

Դուրս ելա սենյակից: Մի տեսակ էի: Այսինքն՝ ի՞նչ տեսակ: Հուզվա՞ծ էի: Դա այնքան էլ ճիշտ չի լինի: Անհամբե՞ր էի: Դա էլ երևի սխալ է: Բայց էլի, մի տեսակ արտակարգ էի: Եվ որովհետև միտքս գոնե շատ հանգիստ էր, դրա համար էլ այդ արտակարգությունն սկսեցի փնտրել զգացմունքներիս մեջ՝ մի լավ խրատ տալու համար նրան: Մինչև դարպասին հասնելս գտա, որ հարցը Անահիտի հետ մի քիչ կապ ունի: Այդ օրը կարծես մի քիչ ավելի էի մտածում նրա մասին: Եվ ի՞նչ. հազիվ էի անցել ճանապարհի կեսը, երբ արեցի, այսպես ասած՝ մի գյուտ, մի անակնկալ գյուտ: Ես սիրահարված էի Անահիտի վրա...

Ի՜նչ դժվար բան է առաջին անգամ սիրահարված լինելը... Ինքս ինձ վրա բարկանում էի: Քո ի՞նչ գործն է սիրահարվել, այն էլ՝ առաջին անգամ տեսնելիս: Իսկ լավ կլինի՞, եթե

բանից դուրս գա, որ նա արդեն սիրահարված է ուրիշի վրա: Սիրահարվելուն էլ կարգ ու կանոն կա: Նախ պիտի իմանայի, թե, ինչպես ասում են՝ ազա՞տ է…

Լավ, ասենք թե ազատ է: Հետո՞ ինչ: Պիտի գնամ, հանդիպեմ նրան, պիտի մի քիչ խոսենք համագումարի աշխատանքների մասին, մի քիչ էլ ընկերական հարցերի շուրջը և մերջ: Իսկ տուն վերադառնալիս պիտի ինձ նախատեմ, որ այն, ինչ որ հարկավոր էր ասել՝ չեմ ասել:

Իսկ եթե ասե՞մ…

Այդ բոպեին մտքերս խզվեցին, որովհետև արդեն հասել էի ակումբին:

4

Ճիշտն ասած, չգիտեմ, թե սիրո ինչ աստիճաններ կան և դրանցից որն է ամենաուժեղը: Ըստ երևույթին, իմ սերը բավական ուժեղներից էր: Սակայն, չնայած դրան, հենց որ մտա ակումբ, ես իսկույն գնացի խմբակներից մեկի պարապմունքին, որի նյութն այդ օրը շատ հետաքրքիր էր: Միայն մի անգամ նայեցի շուրջս՝ փնտրելով, թե չկա՞ արդյոք Անահիտն այդ հավաքույթում:

Երբ պարապմունքն ավարտվեց, ես նրան սկսեցի փնտրել ակումբում, փնտրեցի բոլոր սենյակներում, բայց ոչ մի տեղ չգտա:

Տխրեցի: Նստեցի և սկսեցի մտածել: Այս լավ չեղավ: Գուցե նա մեր միջավայրից կտրված աղջիկ է և կարող է ամիսներով էլ ոտք չկոխել այստեղ: Ո՞վ գիտե…

Երևի դեմքս խիստ մռայլ արտահայտություն էր ստացել, երբ մոտեցավ ընկերուհիներիցս մեկը և նստեց կողքիս:

— Ինչո՞ւ ես տխուր…

Հարցը տրված էր բավական սրտակցությամբ: Դրանից ոգևորված, ես ուզեցի ավելի ևս մռայլ ցույց տալ ինձ, բայց գլխի ընկնելով, որ դրանից ոչինչ դուրս չի գալիս՝ բացի ծամածռությունից, ուղղակի ասացի.

— Սիրահարված եմ, Աստղիկ…

Չգիտեմ, իսկապես, այդ խոսքիս մեջ ծիծաղելի բան կա՞ր, բայց նա սկսեց բարձր ծիծաղել:

— Ի՞նձ վրա ես սիրահարված:

— Չէ՛ մի, քեզ վրա: Անահիտի:

— Ո՞ր Անահիտի:

— Տեր-Կարապետյան, բայց որովհետև հիմի Տեր չկա, դրա համար էլ՝ Կարապետյան…

Այս անգամվա ծիծաղը հարկ եղածից չափազանց բարձր էր:

— Մեր Անահիտի՞...

— Ուրեմն ճանաչո՞ւմ ես նրան,— հարցրի ես մեծ հետաքրքրությամբ:

Աստղիկը նկատելով, որ ես կատակ չեմ անում և իրոք սիրահարված եմ, լրջացավ:

— Այո, ճանաչում եմ: Այսինքն՝ ոչ միայն ճանաչում եմ, այլև մենք միասին ենք ապրում:

— Մի՞թե: Այ քեզ պատահականություն:

— Այո,— շարունակեց նա,— Անահիտը դիմում էր տվել և անցյալ օրն ընդունվել է կոմերիտմիության անդամ: Այնուամենայնիվ, նրա բնավորության մեջ դեռ կան անհարազատ գծեր... Բայց ոչինչ,— ավելացրեց նա,— կամաց-կամաց կուղղվի...

Աստղիկը վեր կացավ գնալու՝ սպառնալով, որ իմ անհամարձակության դեպքում ինքը կհաղորդի, որ ես սիրում եմ նրան:

— Բայց, Արամ,— ավելացրեց նա,— եթե չես սիրում իրոք, այլ ուզում ես ժամանակ անցկացնել՝ զգույշ կաց...

Վիրավորվեցի:

— Ժամանակ անցկացնե՞լ, ե՞ս...

Նա կատակ էր անում: Նա հո գիտեր ինձ:

Վեր կացա և գնացի տուն: Եվ պետք է խոստովանեմ հանցանքս, որ խախտելով սիրահարության բոլոր կանոնները, հանդգնեցի այդ գիշեր սովորականի պես կուշտ ու կուռ քնել:

5

Գուցե ես շատ անշնորհք եմ պատմում այս բոլորը, գուցե պատմում եմ ոչ այնպես, ինչպես պետքն է: Այնտեղ, որտեղ պետք է տխրել, չեմ տխրում, որտեղ պետք է հուզվել, չեմ հուզվում, և ընդհակառակը: Բայց դա իմ մեղքը չէ, ոչ էլ մի ուրիշինը: Երբ իմացա այդ տխուր լուրը, որի մասին պիտի պատմեմ քիչ հետո, նույնիսկ ժամանակ չունեցա տխրելու: Դեպքերի բերմամբ ճիշտ այդ օրը խրճիթ-ընթերցարանում մենք կազմակերպել էինք ծիծաղի երեկո, և ես պետք է մասնակցեի այդ երեկոյին մի կոմիկական դերում: Ասացեք հիմա, ես մեղավո՞ր եմ, կամ ո՞վ է մեղավոր...

Երբ ես մի օր հանդիպեցի իմ մի ընկերոջը և ամեն ինչ պատմեցի նրան, նա ասաց, որ ես սիրել չգիտեմ: Հետո մի քանի ուրիշներն էլ ինձ ասացին այդ բանը:

Բայց, մի՞թե իրոք, ես սիրել չգիտեմ: Ոչ, իհարկե ոչ, ես սիրել գիտեմ և սիրում էի Անահիտին: Շատ էի սիրում:

Երբ ես վերադառնում էի քաղաք՝ իմ փոքրիկ սենյակը, այդ համեստ կահավորված բույնը դիմավորում էր ինձ իր սովորական մենակությամբ: Բաց էի անում դուռը, մտնում էի ներս, կարդում էի մի քիչ, գրում, ապա պառկում էի մահճակալի վրա և սկսում երազել:

Երեկոն իջնում է: Այստեղ միայն ես եմ: Որքա՜ն լավ կլիներ, եթե ինձ հետ լիներ նա...

Նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ չէի տեսել Անահիտին, դարձյալ ցանկանում էի, որ նա լիներ ինձ մոտ: Չգիտեի, թե հատկապես ով էր այդ նա-ն, բայց գիտեի, որ նա աղջիկ է և ընկերուհի: Իսկ երբ տեսա Անահիտին, իսկույն զգացի, որ նա ճիշտ նա է, որին ես երազել էի իմ մենակության րոպեներին:

Լավ բան չէ մենակությունը: Ճիշտ է, ես ունեի շատ ընկերներ և ընկերուհիներ, որոնց սիրում էի և նրանք էլ ինձ էին սիրում: Նրանց հետ ես ինձ մենակ չէի զգում: Այդ զգացումը պաշարում էր ինձ, երբ ես գալիս էի տուն՝ հանգստանալու կամ քնելու:

Սենյակ մտնելիս ինձ թվում էր, թե նա պիտի բաց աներ դուռը և ժպտար...

— Բարև, Արամ:

— Բարև, սիրելիս:

Կնստեինք լուսամուտի մոտ, կնայեինք երկնքին:

— Անահիտ, տեսնո՞ւմ ես Մարսը...

Նա, իհարկե, տեսնում էր:

— «Կարմիր աստղը» կարդացե՞լ ես: Դրա մասին է գրված:

Նա, իհարկե, կարդացել էր:

Եվ մենք կսկսեինք երևակայել մեզ որպես Մեննի ու Նելլա, որոնք աշխատում են մարդկության օգտին:

Այսպես կլիներ, և ես մենակ չէի լինի այդ փոքրիկ սենյակում:

Բացի մենակության զգացումից, ինձ պաշարել էր մի այլ, անծանոթ զգացում: Թևերս ձգվում էին առաջ՝ մեկին գրկելու և համբուրելու համար, սեղմելու կրծքիս, շշնջալու, որ նա լավ աղջիկ է և ես սիրում եմ նրան:

Մի անգամ, մոտ անցյալում, երբ ակումբից դուրս էինք եկել և ես դեպի տուն էի ուղեկցում բավական հեռու, քաղաքի ծայրում ապրող ընկերուհիներիցս մեկին, կանգ առա ճանապարհին և ասացի.

— Դու գեղեցիկ աղջիկ ես:

Նա ծիծաղեց և ուզեց շարունակել ճանապարհը, բայց ես գրկեցի նրան: Նա դուրս պրծավ և խփեց ձեռքերիս:

— Ամոթ չէ՞, Արամ...

Ես գլուխս կախեցի:

— Լավ, հաշտվենք, միայն թե խոսք տուր, որ այլևս չես անի,— ասաց նա:

Ես խոսք տվեցի: Իսկ երբ մոտեցել էինք նրանց դռանը, նա ասաց.

— Արամ, լավ կանես, եթե ամուսնանաս:

Իսկ հետևյալ օրը մենք նույն ընկերներն էինք, ինչ որ առաջ:

6

Մի անգամ գյուղերում եղած ժամանակս ես հիվանդացա և ստիպվեցի երեք շաբաթ քաղաք չգնալ: Պառկել էի մեր կոմերիտական տղաներից մեկի տանը և միայն լրագրերով ու բանավոր տեղեկություններով էի կապված քաղաքի հետ: Երեք շաբաթ հետո վեր կացա և սրտատրոփ ուղևորվեցի քաղաք: Այնտեղ, գավկոմում, իմացա, որ ինձ տվել են մի ամսվա արձակուրդ, որը ես որոշեցի անցկացնել քաղաքում:

Վազ տվեցի ակումբ: Ընկերներս, որ արդեն լսել էին հիվանդությանս մասին և մի քանիսն էլ այցելության էին եկել ինձ գյուղում, հավաքվեցին, և մենք բաց արեցինք մի ջերմ խոսակցություն: Ես շատ նորություններ էի լսում, որոնք գյուղ չէին հասել:

Խոսակցության ժամանակ ես հանկարծ նկատեցի, որ Անահիտը մենակ կանգնած է լուսամուտի մոտ և խռովական երեխայի նման ցուցամատը կրծելով, նայում է մեզ: Ինչո՞ւ չի մոտենում:

Բարևեցի:

Նա բարևեց լուրջ դեմքով և շարունակեց մնալ այդպես: Իսկ երբ ընկերներս ու ընկերուհիներս ցրվեցին ամեն մեկը մի կողմ, Անահիտը նոր միայն մոտեցավ ինձ, և ես տեսա, որ նրա դեմքը սովորականի պես զվարթ էր:

— Արամ,— ասաց նա ժպտալով,— հիմա կարելի՞ է քեզ հետ խոսել:

— Իսկ մե՞թե երբևիցե չէր կարելի,— զարմացա ես:

— Էհ,— ասաց նա սրտնեղվելով,— ես հո դա չե՞մ ասում: Հիմա կարելի՞ է մի քիչ երկար խոսել քեզ հետ:

— Որքան որ ուզում ես,— բացականչեցի ես:

Նա առաջարկեց գնալ այգի: Ամբողջ ճանապարհին մենք խոսում էինք կողմնակի նյութերի մասին:

Նստեցինք մի նստարանի վրա:

— Իսկ ի՞նչ է անում Աստղիկը,— հարցրեցի ես նրա հետ ապրող ընկերուհու մասին:

Երևի «ի՞նչ է անում»-ը նա սխալ լսեց, նրան թվաց, թե ես ասացի՝ «ի՞նչ է ասում»:

— Նա ասում է, որ դու ինձ սիրում ես,— հայտնեց Անահիտը՝ շրթունքներն այնպես ծռմռելով, կարծես հանդիմանում էր նրան:

— Հա՞...— ասացի միայն այսքանը: Ես շփոթվեցի, չէի սպասում, թե այդքան շուտ պիտի պայթեր այդ հաճելի, ասենք այսպես՝ փոթորիկը:

Ես հազիվ էի «հա» արել և բերանս հազիվ էր իր նախկին դիրքն ընդունել, երբ Անահիտն ավելացրեց.

— Ստախոսը...

— Չէ, ինչո՞ւ,— վրա բերեցի ես,— Աստղիկը սուտ խոսող աղջիկ չէ: Եթե ասել է՝ երևի մի բան կա: Ո՞վ գիտե:

Անհարմար դրություն էր ստեղծվում: Եթե ընկերուհուս պաշտպանեի՝ ակամայից խոստովանություն էր դուրս գալիս, իսկ եթե չպաշտպանեի, ուրեմն, իսկապես, ստախոս էի դուրս բերելու նրան: Ինչպե՞ս կարելի էր…

— Ուրեմն, դու ինձ սիրո՞ւմ ես...

— Դե, Աստղիկը սուտ չէր ասի...

Անահիտը բարձր ծիծաղեց.

— Դու համոզվա՞ծ ես:

— Սիրում եմ քեզ, Անահիտ...

Այս խոսքիս վրա նա լրջացավ, ապա հարցրեց.

— Իսկ եթե չե՞ս սիրում...

— Ախր ինչպե՞ս, չէ՞ որ սիրում եմ:

— Դե ուրեմն համբուրիր ինձ, որ հավատամ:

Ինչո՞ւ չէ: Դա լիովին թույլատրելի է, մանավանդ որ նա ուզում է հավատալ...

Առաջին անգամ ես նրա մեջ ոչ կոմերիտական գծեր տեսա իմ արձակուրդի այդ ամսում: Այսինքն՝ ինչպիսի՞ գծեր: Շատ տարօրինակ և անբացատրելի: Դրանցից մի երկուսի մասին կպատմեմ երկու խոսքով:

Գավկոմը կանչեց մոտ հարյուր կոմերիտականների, որոնց հետ նաև ոչ կոմերիտական երիտասարդների՝ ակումբի անդամներից, մի քանի օրով գյուղ ուղարկելու համար: Յուրաքանչյուր խմբի մեջ կար մի զեկուցող, իսկ մյուսները ներկայացումներ և համերգներ էին տալու:

Առավոտյան ժամը ութն էր: Գավկոմի դռանը հավաքված, մենք խմբեր էինք կազմում, վիճում, նորից կազմում և, վերջապես, երբ մի խումբը պատրաստ էր լինում, իսկույն նստում էր իրեն հատկացված ֆուրգոնը:

— Դու ո՞ւր ես գնում,— ասաց մի ընկեր՝ Անահիտին, որը նույնպես այդտեղ էր:

— Դեռ չգիտեմ:

Այդ ժամանակ դեպի Զ-ի շրջանը գնացողների միջից միակը բղավեց.

— Ե՛կ այստեղ, Անահիտ, աստվածավախ պառավի դերը տանելու համար պետք կգաս, ուրիշ աղջիկ չկա հետներս:

Ես ուրախացա: Նա, իհարկե, լավ կխաղա:

— Դա լավ եղավ,— ուրախ բացականչեցի ես:

Անահիտը, չգիտեմ ինչու, զարմացած նայեց ինձ:

— Ոչ, ես ձեր խմբի հետ եմ գալու,— ասաց նա կամակորությամբ:

Մերոնցից մեկը բղավեց.

— Մեր խումբը լրիվ է, նեղություն մի քաշիր...

Այդ րոպեին գավկոմի քարտուղարը, կանգնելով ոտների ծայրերի վրա, բղավեց.

— Շարժվե՛լ...

Ֆուրգոնները միանգամից շարժվեցին դեպի զանազան կողմեր:

Միայն վերադառնալուց հետո իմացա, որ Անահիտը ոչ մի խմբում չի եղել:

Այդ դեպքից հետո նա ինձ հետ բավական սառն էր և նույնիսկ մի անգամ էլ լաց եղավ, թե ես նրան չեմ սիրում: Որտեղի՞ց էր այդ բանը մտել նրա գլուխը՝ չգիտեմ:

Երկրորդ անգամ, դա վերջին անգամն էր, այսպես պատահեց:

Մի գիշեր ես քաղաքի հեռավոր ծայրում ապրող ընկերուհուս պիտի ուղեկցեի իրենց տուն: Ընկերուհիս չէր վախենում, բայց մենք՝ տղաներս, չէինք թույլ տալիս նրան՝ գիշերով

մենակ վերադառնալ: Մեզանից յուրաքանչյուրը պարտք էր համարում ուղեկցել նրան, ինչպես և հեռու տեղում ապրող մեր մյուս ընկերուհիներին:

Այդ օրն ակումբում դասախոսություն կար: Վերջանալուց հետո Անահիտն ասաց.

— Գնանք, Արամ ջան, ուղեկցիր ինձ:

— Ես ուղեկցելու եմ ընկերուհիներիցս մեկին, որը շատ հեռու է ապրում: Արդեն խոսք եմ տվել: Եթե ուզում ես՝ եկ դու էլ, հետո միասին կվերադառնանք,— առաջարկեցի ես:

— Ոչ, չեմ ուզում,— ասաց նա և վիրավորված հեռացավ:

Հետևյալ օրը սենյակումս նստած էի: Նախկին անպաճույճ սենյակս, շնորհիվ Անահիտի մի քանի այցելության, շատ էր գեղեցկացել: Ամեն ինչ իր տեղն էր դրված՝ ճաշակով ու խնամքով: Լավ աղջիկ էր Անահիտը, իհարկե, միայն թե անհասկանալի բաներ շատ ուներ...

Դուռը բացվեց, և ներս մտավ նա:

— Անահիտ, քո մասին էի մտածում,— ասացի ես ժպտալով:

Նա լուռ էր և անժպիտ:

— Դու ինձ այլևս չես սիրում,— շշնջաց նա:

— Ո՞վ ասաց...

— Ո՞ւր գնացիր գիշերով այն աղջկա հետ...

— Անահիտ,— ապշեցի ես:— Դու չգիտե՞ս միթե, որ ես միայն քեզ եմ սիրում: Իսկ նա մեր լավ աղջիկներից է և իմ ընկերուհին:

— Իսկ խոսք տալի՞ս ես, որ այսուհետև բոլոր կապերդ կխզես նրա հետ,— հարցրեց նա:

— Ի՞նչ... Ընկերակա՞ն կապերս...

— Այո, նույնիսկ ընկերական: Ես չեմ ուզում տեսնել քեզ նրա հետ: Խոսք տալի՞ս ես, Արամ ջան...

Բարկացա.

— Ո՛չ, չեմ տալիս:

Անահիտը լուռ վեր կացավ և գնաց դեպի դուռը: Կանգնեց մի քիչ, ապա առանց ետ նայելու, հեռացավ:

Այլևս անհնար եղավ նրա հետ հաշտվել: Նա դադարել էր ինձ սիրելուց, որովհետև, ինչպես ինքն էր ասել իմ մասին՝ «նա ինքը հեռացավ ինձանից և ոչ թե ես՝ նրանից...»:

8

Իմ փոքրիկ սենյակը նորից դատարկվեց...

Այս անգամ ես ամիսը միայն մի անգամ էի քաղաք հանդիպում, իսկ երբ եղանակները ցրտեցին՝ հավաքեցի իրերս ու անկողինս, մնաս բարև ասացի ծանոթ պառավին և տեղափոխվեցի գյուղ: Հիմա կարող էի գնալ ավելի հեռու գյուղեր, որտեղ մինչև այդ աշխատանք տանելու հնարավորություն չէի ունեցել:

Քայլում էի գյուղերի ճանապարհներով և մտածում էի այն աղջկա մասին, որին սիրեցի, բայց որը շատ տարօրինակ գծեր ուներ:

Հին հոգեբանություն ուներ:

Ի՞նչ է անում նա հիմա... Հիշո՞ւմ է ինձ արդյոք...

9

Երեք ամիս շարունակ ես քաղաք չգնացի: Անահիտի մասին լսեցի երկու անգամ: Առաջին անգամ լսեցի, որ նա ամուսնացել է: Մի անծանոթ տղա, ոչ կոմերիտական, ծանոթացել է նրա հետ, և մի շաբաթից հետո նրանք ամուսնացել են: Ամուսինը նրան շատ է սիրել: Հետո լսեցի, որ Անահիտը պարծենալով է պատմել, որ նա իր կնոջ պատճառով ծեծել է երեք տղայի և ապտակել երկուսին: Ահա այդքան սիրել է նա Անահիտին:

Մի անգամ էլ այն իմացա, որ նա դադարել է բջջի հետ կապ ունենալուց, դրա համար էլ նրան հեռացրել են կոմերիտմիությունից:

Այսպիսով ամեն ինչ վերջացավ...

Գնաս բարով, սիրելի Անահիտ: Իսկ ես պետք է դիմացի գյուղը հասնեմ...

10

Գյուղի ճանապարհով սվսվում է հովը: Ի՜նչ գեղեցիկ են դաշտերը: Քայլում եմ ճանապարհով, երկար է ճանապարհը: Այս ի՞նչ թախիծ է նստել սրտիս մեջ: Այս ո՞ւմ մասին եմ մտածում.

Դիմացի արտի մեջ որքա՜ն տուղտ կա: Դրանց դեղին բաժակաթերթերն արևի պես են փայլում երկար ցողունների վրա: Ի՞նչ արտ է դա:

Դա Կոմունաշենի «Խորտակված հոգիների» փողոցն է. այն հոգիների, որոնք կարող էին նոր աշխարհինը լինել, բայց եղան հնինը: Ես ինքս եմ այդպես անվանել այդ փողոցը...

Գրպանումս մի նկար կա, մի լուսանկար: Հանում եմ և նայում: Անահիտինն է...

Քամին շնկշնկում է, տուղտերն օրորվում են: Ես այստեղ քեզ համար հուշարձան կկառուցեմ, Անահիտ:

Ես քեզ շատ էի սիրում: Դու մեռել ես այժմ ինձ համար, բայց քո հիշատակն եմ սիրում հիմա էլ: Բայց և այնպես Կոմունաշենի բնակիչները թող իմանան, երբ անցնեն քո հուշարձանի մոտով, որ թեև ես քեզ այնքան շատ էի սիրում, այնուամենայնիվ քո հուշարձանը կառուցեցի «Խորտակված հոգիների» փողոցում, որտեղ առայժմ արտ է ցանված և որտեղ օրորվում են ոսկեդեղին տուղտերը...

1926